

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

### Մեեր Սկրտչյան

ԵՊՀ եվրոպական և միջազգային  
իրավունքի ասպիրանտ

Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տարածքներում կատարված հանցագործությունների համար ստեղծված միջազգային քրեական տրիբունալների, ինչպես նաև մշտապես գործող Միջազգային քրեական դատարանի՝ արդարադատության բնագավառում գործառական դերակատարության, դրանց իրավական կարգավիճակի և իրավազորության բնույթի ուսումնասիրությունը ունի ոչ միայն տեսական, այլ նաև խիստ գործնական նշանակություն:

Միջազգային քրեական դատարանների և անդամ պետությունների փոխհարաբերությունը բազմասկողմ է: Այն սովորաբար ձևավորվում է միջազգային դատական աստիճանների կողմից գործերի քննության մինչդատական վարույթի փուլերում և վերաբերում է դատարանների կողմից պետություններին հասցեագրված՝ որոշակի անձանց ձերբակալելու, ապացույցներ հավաքելու, վկաներին հայտնաբերելու, որոշակի դատավարական գործողություններ կատարելիս միջազգային պաշտոնատար անձանց օգնություն ցուցաբերելու խնդրանքների իրականացմանը և այլ հարցերի:

Միջազգային քրեական արդարադատություն իրականացնող մարմինների իրավազորության սկզբունքային տարբերությունը քրեական արդարադատություն իրականացնող ներպետական մարմիններից (*inter alia*) այն է, որ միջազգային դատարանները չունեն սեփական ոստիկանական ուժեր, որոնք կարող էին դատարաններին օժանդակել՝ իրենց կանոնադրական լիազորությունների իրականացնելու: Ոստի պետությունների համագործակցությունը միջազգային դատական մարմինների հետ միջազգային քրեական արդարադատության արդյունավետության կարևորագույն նախապայման է, սակայն այս կախվածությունը պրակտիկայում առաջացնում է բավականին դժվարություններ<sup>1</sup>: Ընդ որում, դա վերաբերվում է ինչպես մինչդատական վարույթի, այնպես էլ դատական քննության և նշանակված պատիժների կատարման փուլերին:

Հատկապես նախկին Հարավսլավիայի տարածքում կատարված հանցագործությունների համար ստեղծված միջազգային *ad hoc* տրիբունալի պրակտիկական ապացույցեց, որ միայն պետությունների անկեղծ և հետևողական համագործակցությունը միջազգային դատական մարմինների հետ կարող է երաշխավորել միջազգային քրեական արդարադատության արդյունավետությունը: Ինչպես ցույց տվեց նույն Հարավսլավիայի տրիբունալի փորձը, միջազգային դատարանի հետ չհամագործակցելը պայմանավորված է ինչպես քաղաքական, այնպես էլ այլ գործոններով:

Ասվածի համատեքստում ծագում է օրինական հարց. արդյո՞ք միջազգային քրեական

<sup>1</sup> St' u Yolanda Gamarra, Alejandra Vicente, United Nations Member States' Obligations Towards the ICTY: Arresting and Transferring Lukic, Gotovina and Zelenovic, International Criminal Law Review, Volume 8, Issue 4, էջ 631

դատարանի անդամ պետությունը այդ դատարանի հետ համագործակցելու հարցում ունի միջազգային իրավունքով թույլատրելի, թեկուզ չնչին հայեցողության ազատություն:

Մինչ հիմնախնդրին անդրադառնալը նշենք, որ անհրաժեշտ է հստակ սահմանազատում անցկացնել նախկին Հարավսլավիայի և Ռուսաստանի տարածքներում կատարված հանցագործությունների քննության համար ստեղծված միջազգային տրիբունալների առջև պետությունների ունեցած պարտավորությունների և Հռոմի 1998 թ. ստատուտով հիմնադրված մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանի առջև պետությունների ունեցած պարտավորությունների միջև: Նման տարբերակման անհրաժեշտությունը պայմանավորված է այդ դատարանների հիմնադրման միջազգային-իրավական հիմքերի տարբերությամբ, դրանց գործունեությունը կանխորոշող հիմնադիր փաստաթղթերում ամրագրված նորմերի՝ միջազգային իրավունքի աստիճանակարգում զբաղեցրած տեղերով:

Ինչպես հայտնի է, նախկին Հարավսլավիայում և Ռուսաստանում կատարված հանցագործությունների քննության համար միջազգային դատարանները ստեղծվեցին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի հիման վրա: Գործելով ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ Անվտանգության խորհուրդը Հարավսլավիայի տարածքում մարդկության և խաղաղության դեմ ուղղված հանցագործությունները քննելու համար 1993 թ. մայիսի 25-ին ստեղծեց միջազգային տրիբունալ և հաստատեց դրա կանոնադրությունը<sup>2</sup>: Դրանում մանրամասն սահմանվեցին այն հանցագործությունների նկարագրությունը, որոնց վրա տարածվում էր դատարանի իրավազորությունը: Դրանք էին՝ ժնկի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիաներով նախատեսված լուրջ խախտումները (հոդվ. 2), պատերազմի օրենքների կամ սովորույթների խախտումը (հոդվ. 3), ցեղասպանությունը (հոդվ. 4) և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները (հոդվ. 5):

Նշված սկզբունքները բացարձակապես նույնությամբ կրկնվեցին Ռուսաստանի տարածքում կատարված ցեղասպանության և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի այլ կոպիտ խախտումների համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից 1994 թ. նոյեմբերի 8-ին ստեղծված միջազգային տրիբունալի կանոնադրության 20-րդ հոդվածում<sup>3</sup>:

Նշված կանոնադրությունների ընդունման վերաբերյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերում, ի թիվս այլոց, նշվում էր, որ բոլոր պետությունները պարտավոր են բանաձևի և դատարանի կանոնադրության հիման վրա համագործակցել տվյալ միջազգային տրիբունալի հետ և իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան ձեռնարկել բոլոր միջոցները, որոնք կարող են անհրաժեշտ լինել նշված բանաձևերի և տրիբունալների կանոնադրությունների պահանջներն ի կատար ածելու համար: Այս պահանջները ավելի կոնկրետացվեցին նախկին Հարավսլավիայի (հոդվ. 29) և Ռուսաստանի (հոդվ. 28) միջազգային տրիբունալների կանոնադրություններում:

Նշված հոդվածների 1-ին կետում ամրագրվում է պետությունների ընդհանուր պարտավորությունը՝ համագործակցել տրիբունալների հետ, իսկ 2-րդ կետում նշվում է այն գործողությունների ոչ սպառիչ ցանկը, որոնք տրիբունալների դատական բաժանմունքի համագործակցության խնդրանքի կամ հրամանի հիման վրա պարտավոր են կատարել

<sup>2</sup> St/Res/827, 25 May, 1993:

<sup>3</sup> St/Res/955, 8 November 1994:

պետությունները առանց չարդարացված ձգձգման: Այդ գործողությունները ներառում են անձանց գտնվելու վայրը պարզելը և ճանաչման ներկայացնելը, վկաներից ցուցմունքներ ստանալը և ապացույցների հավաքագրումը, փաստաթղթեր հանձնելը, անձանց ձերբակալումը կամ կալանավորումը, մեղադրյալների հանձնումը տրիբունալին:

Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տարածքներում կատարված հանցագործությունների վերաբերյալ տրիբունալների կանոնադրություններում ամրագրված է, որ այդ դատարանների իրավազորությունը ազգային դատարանների իրավազորության նկատմամբ ունի առաջնայնություն, այսինքն՝ դատական քննության ցանկացած փուլում տրիբունալները, շեղվելով *aut dedere aut judicare* սկզբունքից, կարող են ազգային դատարաններին պաշտոնապես խնդրել իրենց հանձնել գործի վարույթը (համապատասխանաբար՝ հոդվ. 9 և 8)<sup>4</sup>: Պրակտիկայում նման իրավիճակ առաջացավ գերմանական դատարանում Տադիչի գործի քննության ժամանակ, երբ գերմանական իշխանությունները ստիպված եղան վերջինիս փոխանցելու Նախկին Հարավսլավիայի գործով տրիբունալին, թեև ներպետական մակարդակում գործի քննությունը գրեթե հասել էր դատական լսումների փուլին<sup>5</sup>:

Ելնելով նշված իրավակարգավորման առանձնահատկությունից՝ բազմաթիվ պետություններ իրենց ներպետական օրենսդրություններում ընդունել են այնպիսի դրույթներ, որոնք համապատասխան խնդրանքի առկայության դեպքում սահմանում են մեղադրյալի հանձնման կարգը միջազգային տրիբունալներին: Նախկին Հարավսլավիայի գործով տրիբունալի հետ իրենց հարաբերությունների, մասնավորապես տրիբունալի որոշումների՝ ներպետական մակարդակում իմպլեմենտացման վերաբերյալ հատուկ օրենքներ են ընդունել շուրջ 20 (հիմնականում՝ եվրոպական) պետություններ: ԱՄՆ կառավարությունը հատուկ համաձայնագիր է ստորագրել Նախկին Հարավսլավիայի գործով տրիբունալի հետ, որով պարտավորվել է տրիբունալին հանձնել այն անձանց, ովքեր այդ դատարանի կողմից կանոնադրության և ընթացակարգի ու ապացուցման կանոնների համաձայն մեղավոր են ճանաչվել արդարադատության դեմ ուղղված հանցանքներ կատարելու մեջ, եթե տվյալ անձինք ԱՄՆ քաղաքացիներ են կամ գտնվում են վերջինիս տարածքում<sup>6</sup>:

Այժմ քննության առնենք այն հարցը, թե միջազգային-իրավական ո՞ր նորմերն են հանդիսանում պետությունների՝ տրիբունալների հետ համագործակցելու միջազգային-իրավական պարտավորության հիմքը:

Ինչպես գիտենք, ՄԱԿ-ի կանոնադրության 25-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները ենթարկվում են ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումներին և կատարում են դրանք, եթե ԱԽ-ն միջոցառումներ է ձեռնարկում՝ գործելով միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման նկատառումների հիման վրա: Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալների հիմնադրումը ՄԱԿ-ի ԱԽ կողմից թեև գրականության մեջ տարակարծիք մեկնաբանությունների տեղիք է տվել, այնուամենայնիվ համար-

<sup>4</sup> Տե՛ս Վլադիմիր Յովիանիչիայան, Քրեական արդարադատության սկզբունքները միջազգային իրավունքում, Երևան, 2011, էջ 138:

<sup>5</sup> Տե՛ս Саша Рольф Людер, Правовой характер международного уголовного суда и возникновение наднациональных элементов в международной уголовной юстиции, *Международный журнал Красного креста, сборник статей*, 2002, էջ 31:

<sup>6</sup> Տե՛ս Agreement on Surrender of Persons between the Government of the United States and the Tribunal, հոդվ. 1 կետ 2:

վում է ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխի 41-րդ հոդվածի հիման վրա ձեռնարկված քայլ: Սա իր արտահայտությունն է գտել նաև Տադիչի գործով Նախկին Հարավսլավիայի տրիբունալի վերաքննիչ բաժանմունքի իրավական դիրքորոշումներում: Ասվածի համատեքստում կարծում ենք, որ պետությունները, ելնելով ՄԱԿ-ի կանոնադրությամբ անրագրված իրենց միջազգային իրավական պարտավորությունների բնույթից, պետք է բարեխղճորեն կատարեն տրիբունալների հիմնադրման մասին ԱԽ վերոհիշյալ բանաձևերի պահանջները և համագործակցեն տրիբունալների հետ: Ավելին, մեկ այլ գործով նույն տրիբունալի վերաքննիչ բաժանմունքը եզրակացրեց, որ տրիբունալների հետ համագործակցության պարտավորությունը վերաբերում է ոչ միայն այն պետություններին, որոնց տարածքում տեղի էին ունեցել տրիբունալների իրավագործումը ենթակա հանցագործությունները (Նախկին Հարավսլավիայի տարածքում առաջացած պետությունները և Ռուանդան), այլև այն վերաբերում է նաև ՄԱԿ-ի անդամ բոլոր պետություններին<sup>7</sup>: Հետևաբար, պետությունների նշված պարտավորությունները *erga omnes* պարտավորություններ են, և բոլոր պետությունները, ինչպես նաև միջազգային հանրությունը ունեն իրավական շահագրգռվածություն դրանց պահպանման հարցում: Ղեյտոնյան խաղաղության համաձայնագրերով Նախկին Հարավսլավիայի գործով տրիբունալի հետ համագործակցության պարտավորություն դրվեց նաև Նախկին Հարավսլավիայի տարածքում առկա ինքնահռչակ և չճանաչված ազգային կազմավորումների վրա, որոնք արդյունավետ վերահսկողություն էին իրականացնում որոշակի տարածքների նկատմամբ<sup>8</sup>:

Ինչ վերաբերում է ՄԱԿ-ի անդամ չհանդիսացող պետություններին, ապա ՄԱԿ-ի կանոնադրությունը՝ որպես ունիվերսալ միջազգային պայմանագիր, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 34-րդ հոդվածի համաձայն, երրորդ պետության համար պարտավորություններ կամ իրավունքներ չի ստեղծում առանց նրա համաձայնության: Սակայն Շվեյցարիայի Համադաշնությունը, որը ԱԽ վերոհիշյալ բանաձևերի ընդունման ժամանակ ՄԱԿ-ի անդամ չէր, իր հստակ համաձայնությունը արտահայտեց լիովին համագործակցելու տրիբունալների հետ:<sup>9</sup>

Պետությունների և միջազգային քրեական դատարանների փոխհարաբերության էությունը առավել ամբողջական բացահայտելու համար կարևոր է նաև այն հարցի լուսաբանումը, թե արդյոք այդ դատարանների իրավական ակտերը ունեն ուղղակի գործողություն պետությունների տարածքում, թե դրանց կատարման համար պահանջվում է ներպետական հատուկ իրավական ակտի ընդունում: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադարձ կատարել ինչպես միջազգային տրիբունալների գործունեության հետևանքով ձևավորված պրակտիկային, այնպես էլ տրիբունալների կանոնադրության իմպլեմենտացմանն ուղղված տարբեր երկրների օրենսդրություններին: Մասնավորապես, Նախկին Հարավսլավիայի տրիբունալում գործերի քննության ժամանակ ձևավորված պրակտիկայի համաձայն՝ այս հարցում տարբերակում է դրվում Նախկին Հարավսլավիայի տրոհման հետևանքով առաջացած պետությունների և մնացած

<sup>7</sup> *St'u Prosecutor v. Tihomir Blaskic, Judgment on the Request of The Republic of Croatia for Review of the Decision of Trial Chamber 2 of 18 July 1997, 29 Octobre, 1997, para. 26*

<sup>8</sup> *St'u Robert Cryer, Hakan Friman, Darryl Robinson, Elizabeth Wilmshurst, An Introduction to International Criminal Law and Procedure, Cambridge University Press, 2nd ed., 2010, էջ 510*

<sup>9</sup> *St'u Federal order on cooperation with the International Tribunals for the Prosecution of Serious violations of International Humanitarian Law, 21 Decembre, 1995, հոդվ. 1:*

պետությունների միջև: Եթե հետաքննությունը կամ վկաների հարցաքննությունը կատարվում է Նախկին Հարավսլավիայի տարածքում ստեղծված պետություններում, ապա տրիբունալի պաշտոնատար անձինք առանց տվյալ պետության պաշտոնատար անձանց մասնակցության կարող են իրականացնել նշված գործողությունները ապացուցողական զանգվածի ձեռքբերման ուղղությամբ: Նման մոտեցումը պայմանավորված է տրիբունալի պաշտոնյաների աշխատանքի նկատմամբ տվյալ պետությունների պաշտոնատար անձանց հնարավոր կանխակալ և խոչընդոտող վերաբերմունքով, ինչպես նաև վկաների անվտանգության նկատառումներից ելնելով<sup>10</sup>: Մնացյալ պետությունների դեպքում գործում է հետևյալ կանոնը. եթե համագործակցության խնդրանքով անհրաժեշտ գործողությունները պահանջում են պետության քննչական մարմինների մասնակցությունը (ինչպիսիք են, օրինակ, տեղերում հետաքննության անցկացումը, ձերբակալման հրամանների իրագործումը, ապացույցների ձեռքբերումը), ապա խնդրանքը ուղարկվում է պետության համապատասխան մարմիններին, որոնք հետագայում ներպետական օրենսդրության համաձայն ապահովում են համագործակցության խնդրանքով պահանջվող գործողությունների կատարումը: Մյուս դեպքը առնչվում է այն իրավիճակին, երբ տրիբունալի հրամանը կամ խնդրանքը անմիջականորեն առնչվում է մասնավոր անձանց, որոնցից պահանջվում է որոշակի գործողությունների կատարում (հայտարարություն տալը, տեսագրությունների և այլ ապացուցողական նյութերի տրամադրումը, տրիբունալի նստավայր ներկայանալը և այլն): Նման դեպքերում համապատասխան ներպետական օրենսդրական նորմի առկայության դերքում տվյալ անձանց համար առաջանում են դատարանի կարգադրությունը կատարելու պարտավորություններ:

Նշենք, որ մի շարք երկրների օրենսդրությունը նախատեսում է նման իրավակարգավորման հնարավորություն: Մասնավորապես «Միջազգային տրիբունալների հետ համագործակցության մասին» Ավստրիայի դաշնային օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տրիբունալ ներկայանալու հրամանները կարող են անմիջականորեն ուղարկվել Ավստրիայում գտնվող անձանց փոստային հասցեով: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ վկաները անմիջականորեն իրենց ուղարկված տրիբունալի հրամանները կատարելու իրավական պարտավորություն ունեն: Շվեյցարական օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ տրիբունալի կարգադրագրերը նույնպես կարող են անմիջականորեն ուղարկվել հասցեատերերի փոստային հասցեով: Նույնպիսի դրույթ է նախատեսված նաև ֆիննական օրենսդրությամբ: «Նախկին Հարավսլավիայի տրիբունալի հետ համագործակցության մասին» Գերմանիայի Դաշնային Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ եթե Գերմանիայի տարածքում գտնվող անձանց տրվում է տրիբունալ ներկայանալու հրաման վկայություններ տալու նպատակով, ապա այդ ներկայությունը կարող է ապահովվել նույնպիսի իրավական միջոցներով, երբ նշված հրամանը տրված լինել գերմանական դատարանների կողմից:<sup>11</sup>

Այս ամենը վկայում է այն մասին, որ որոշակի դեպքերում Նախկին Հարավսլավիայի տրիբունալի որոշումները կարող են անմիջական գործողություն ունենալ պետությունների տարածքում և տվյալ պետությունում գտնվող անձանց համար անմիջականորեն ա-

<sup>10</sup> St' u Bert Swart, A. H. J. Swart, Alexander Zahar, Goran Sluiter, *The Legacy of the International Criminal Tribunal for the Former Yugoslavia*, Oxford University Press, 2011, էջ 451:

<sup>11</sup> Նախկին Հարավսլավիայի տրիբունալի հետ համագործակցության վերաբերյալ մի շարք պետությունների օրենքները հասանելի են հետևյալ ինտերնետային հասցեով՝ <http://www.icty.org/sections/LegalLibrary/MemberStatesCooperation> (հղման օրը՝ 12.01.2014)

ռաջացնել պարտականություններ: Առանձին երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պետությունները, ճանաչելով իրենց երկրի ներսում ֆիզիկական անձանց նկատմամբ տրիբունալի հրամանների ուղղակի գործողությունը, այդ հրամանների հիման վրա առաջացող պարտականությունների խախտման համար նախատեսում են նույնպիսի պատասխանատվություն, ինչպիսին առկա է ֆիզիկական անձանց ուղղված ներպետական դատական մարմինների կարգադրագրերի խախտման դեպքում:

Մեր կարծիքով, գործնական առումով կարևոր նշանակություն ունի նաև այն հարցի քննարկումը, թե դատարանների հետ համագործակցության պետությունների միջազգային-իրավական պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում միջազգային-իրավական պատասխանատվության ինչպիսի միջոցներ կարող են կիրառվել նրանց նկատմամբ: Այդ դեպքերը սահմանված են Նախկին Հարավսլավիայի տրիբունալի ընթացակարգի և ապացուցման կանոնների *7bis* հոդվածով<sup>12</sup>: Համաձայն այդ հոդվածի, եթե տրիբունալի դատական բաժանմունքը, դատավորը կամ դատախազը հավաստիանում է, որը պետությունը չի կատարում տրիբունալի կանոնադրության 29 հոդվածից բխող իր պարտավորությունները, դրա մասին տեղեկացնում է տրիբունալի նախագահին, որը այդ մասին հաղորդում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, որն էլ իրավասու է որոշելու տվյալ պետության նկատմամբ հնարավոր սանկցիաների կիրառման նպատակահարմարության հարցը: Այսինքն՝ տրիբունալը ինքնուրույն չի կարող պատժամիջոցներ կիրառել պետությունների նկատմամբ իր հանդեպ առկա պարտավորությունները խախտելու համար: Պետության նկատմամբ հարկադրական միջոցների կիրառումը կարող է տեղի ունենալ միայն տրիբունալի կողմից պետության պարտավորության չկատարման մասին իրավական եզրակացության առկայության դեպքում<sup>13</sup>: Պրակտիկալում արդեն հայտնի են դեպքեր, երբ Տրիբունալի եզրակացության հիման վրա տրիբունալի նախագահը իրավիճակը ներկայացրել է Անվտանգության խորհրդի քննարկմանը, որն այդ առթիվ ընդունել է համապատասխան բանաձև<sup>14</sup>: Նախկին Հարավսլավիայի տրիբունալի հետ համագործակցության պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերը բավականին շատ են հատկապես Սերբիայի և սերբական ազգային կազմավորումների մոտ:<sup>15</sup> Տեսականորեն Ախ կողմից կիրառվող հարկադրանքի միջոցները նման պետությունների նկատմամբ կարող են ընդունել բարոյական և քաղաքական դատապարտումից մինչև տնտեսական և դիվանագիտական պատժամիջոցների տեսք:

Այժմ անդրադառնանք մշտական հիմունքներով գործող Միջազգային քրեական դատարանի և պետությունների համագործակցության առանձնահատկություններին: Ինչպես վերը նշվեց, Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալների հետ համագործակցելու պետությունների միջազգային-իրավական պարտավորությունը անհրա-

<sup>12</sup> Նույնատիպ հոդված նախատեսված է նաև Ռուանդայի տրիբունալի ընթացակարգի և ապացուցման կանոնների 7bis հոդվածով:

<sup>13</sup> Տե՛ս Prosecutor v. Tihomir Blaskic, Judgment on the Request of The Republic of Croatia for Review of the Decision of Trial Chamber 2 of 18 July 1997, 29 Octobre, 1997, para. 36:

<sup>14</sup> Տե՛ս Ախ S/Res/1019, 9 November 1995 բանաձևը: Այն ընդունվել է Prosecutor v. Dragan Nikolic Case No IT-94-2-R61 գործով Բոսնիայի սերբական համայնքի՝ տրիբունալի հետ չհամագործակցելու կապակցությամբ:

<sup>15</sup> Ավելի մանրամասն տե՛ս Christopher K. Lamont, International Criminal Justice and the Politics of Compliance, Ashgate Publishing Ltd., 2010:

Ժեշտ է հստակորեն սահմանազատել Միջազգային քրեական դատարանի հետ համագործակցելու պետությունների միջազգային-իրավական պարտավորությունից: Եթե առաջին երկուսը՝ որպես *ad hoc* դատարաններ, հիմնադրվել են ՄԱԿ-ի ԱԽ համապատասխան բանաձևերով, որոնցով պետությունների վրա դրվել է դրանց հետ համագործակցելու համընդհանուր պարտավորություն, ապա Հռոմի միջազգային քրեական դատարանը ունի միջազգային իրավապայմանագրային հիմք, ուստի այս դեպքում դատարանի հետ պետության համագործակցության հարցը որոշելիս առաջնային նշանակություն ունի տվյալ պետության կամահայտնությունը: Այս դեպքում անհրաժեշտ է հստակ սահմանազատում մտցնել Միջազգային քրեական դատարանի հիմնադիր միջազգային պայմանագրի՝ 1998 թ. Հռոմի ստատուտին մասնակից պետությունների և այն պետությունների միջև, որոնք չեն մասնակցում դրան:

Առաջինների համար դատարանի հետ համագործակցելու անհրաժեշտությունը բխում է միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքից: Նշված պետությունների համար համագործակցելու համընդհանուր պարտավորությունը սահմանվում է Հռոմի ստատուտի 86-րդ հոդվածով<sup>16</sup>: Հռոմի ստատուտին ոչ մասնակից պետությունները իրավաբանորեն պարտավորված չեն համագործակցելու դատարանի հետ և կատարելու վերջինիս համագործակցության խնդրանքները: Ասվածով հանդերձ՝ թե՛ տեսական և թե՛ գործնական առումով կարևոր նշանակություն ունի այն հարցի պատասխանը, թե որ դեպքերում Հռոմի ստատուտին ոչ մասնակից պետությունների համար կարող են առաջանալ դատարանի հետ համագործակցելու միջազգային-իրավական պարտավորություններ:

Առաջին հնարավոր տարբերակը ստատուտին ոչ մասնակից պետության կողմից դատարանի իրավագործության ճանաչման և վերջինիս հետ համագործակցելու միակողմանի միջազգային պարտավորության ընդունումն է և դատարանի հետ *ad hoc* համաձայնագրի ստորագրումը: Նման դեպքերում տվյալ պետության համար առաջանում են կոնկրետ իրավիճակին առնչվող դատարանի որոշումների կատարման և համագործակցության խնդրանքների իրականացման պարտավորություններ նույն ծավալով, ինչպիսիք նախատեսված են անդամ պետությունների համար, եթե տվյալ պետության հայտարարության մեջ և դատարանի հետ կնքված *ad hoc* համաձայնագրում առկա չեն համագործակցության վերաբերյալ հատուկ նորմեր: Պրակտիկայում արդեն առկա է նմանատիպ մեկ դեպք: Կոտ դ'Իվուարը՝ ստատուտին ոչ մասնակից պետություն, 2003 թ. ապրիլի 18-ին արված հայտարարությամբ ճանաչել է դատարանի իրավագործությունը՝ հետաքննություն իրականացնելու երկրի տարածքում՝ դատարանի իրավագործությանը ենթակա հանցանքների հնարավոր դեպքերը բացահայտելու համար<sup>17</sup>: Նշված հայտարարության մեջ հստակորեն նշվում էր նաև, որ Կոտ դ'Իվուարի կառավարությունը պարտավորվում է առանց ձգձգումների և բացառությունների համագործակցել դատարանի հետ ստատուտի 9-րդ բաժնի դրույթներին համապատասխան: Ինչպես տեսնում ենք, այս

<sup>16</sup> Նշված հոդվածում նշվում է. «Մասնակից պետությունները, սույն կանոնադրության դրույթներին համապատասխան, բազմակողմանիորեն համագործակցում են դատարանի հետ՝ դատարանին ընդդատյա հանցագործությունների կապակցությամբ նրա կողմից իրականացվող հետաքննության և քրեական հետապնդման գործում»:

<sup>17</sup> Declaration de la reconnaissance de la Compétence de la Cour Pénale Internationale, Fait a' Abidjan, 18 Avr 2003: Հասանելի է հետևյալ հասցեով՝ <http://www.icc-cpi.int/NR/rdonlyres/FF9939C2-8E97-4463-934C-BC8F351BA013/279779/ICDE1.pdf> (հղման օրը՝ 16.01.2014)

դեպքում դատարանի հետ համագործակցելու միջազգային-իրավական պարտավորության հիմքը անմիջականորեն պետության կողմից նման պարտավորության ընդունումն է միակողմանի իրավական ակտի միջոցով: Այժմ քննարկենք այն դեպքերը, երբ Հռոմի ստատուտին ոչ մասնակից պետությունների համար կարող են առաջանալ դատարանի հետ համագործակցելու պարտավորություններ՝ ըստ ընդհանուր միջազգային իրավունքի նորմերի պետությունների ունեցած պարտավորությունների:

Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի b) ենթակետի համաձայն՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, գործելով ՄԱԿ-ի կանոնադրության 7-րդ գլխի հիման վրա, Հռոմի միջազգային քրեական դատարանի դատախազին կարող է ներկայացնել այն իրավիճակը, որի դեպքում ենթադրաբար կատարվել է դատարանի իրավագործության ենթակա մեկ կամ մի քանի հանցագործություն: Նման դեպքերում պետությունների համար կարող են առաջանալ դատարանի հետ համագործակցելու պարտավորություններ՝ անկախ Հռոմի ստատուտին մասնակցելու հանգամանքից, եթե համագործակցության պարտավորությունը ուղղակիորեն բխի Ախ համապատասխան բանաձևից: Նման պարտավորության հիմքը ՄԱԿ-ի կանոնադրության 25-րդ հոդվածն է, որի համաձայն՝ պետությունները ենթարկվում են Ախ համապատասխան որոշումներին և կատարում են դրանք: Ներկայումս արդեն կան Ախ կողմից որոշակի իրավիճակի փոխանցման երկու նախադեպ: Առաջինը Սուդանի ԴարՖուր երկրամասում տեղի ունեցած պատերազմական հանցագործությունների և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների փաստերով իրավիճակի փոխանցումն էր դատարանին<sup>18</sup>, իսկ երկրորդը Լիբիայում մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունների փաստերով իրավիճակի փոխանցումն էր դատարանի քննությանը<sup>19</sup>:

Քննարկենք պետությունների հնարավոր պարտավորությունները Ախ վերոհիշյալ բանաձևերի, մասնավորապես No 1593 բանաձևի լույսի ներքո: Նշված No 1593 բանաձևի 2-րդ կետում սահմանվում է, որ «Սուդանի կառավարությունը և ԴարՖուրի կոնֆլիկտի մյուս բոլոր կողմերը պարտավոր են սույն բանաձևի հիման վրա ամբողջովին համագործակցել դատարանի ու դատախազի հետ և ցույց տալ նրանց անհրաժեշտ ցանկացած օգնություն: Ընդունելով, որ պետությունները, որոնք Հռոմի ստատուտի մասնակից չեն, պարտավորություններ չեն կրում ստատուտի հիման վրա, Ախ հետևողականորեն կոչ է անում բոլոր պետություններին և տարածաշրջանային միջազգային կազմակերպություններին լիովին համագործակցել դատարանի հետ»: Այս ձևակերպումից կարելի է եզրակացնել, որ տարբերակում է դրվում Սուդանի (ինչպես նաև ԴարՖուր երկրամասում կոնֆլիկտի մյուս մասնակիցների) և մնացյալ պետությունների միջև: Եթե Սուդանը, որը Հռոմի ստատուտի մասնակից պետություն չէ, պարտավորվում է ամբողջովին համագործակցել դատարանի հետ, քանի որ այդ մասին ուղղակիորեն նշվում է բանաձևում, և դա բխում է ՄԱԿ-ի կանոնադրության 25-հոդվածից, ապա Հռոմի ստատուտի ոչ մասնակից մյուս պետությունների վրա անմիջականորեն նման պարտավորություն չի դրվում, ինչը բխում է «հետևողականորեն կոչ անել» ձևակերպումից, որը պետությունների համար թողնում է հայեցողության որոշակի ազատության հնարավորություն: Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ նման ձևակերպումը պետությունների վրա դնում է ոչ այնքան իրավական պարտավորվածություն՝ տվյալ գործով կատարելու դատարանի համագործակ-

<sup>18</sup> St/Res/1593, 31 March, 2005:

<sup>19</sup> St/Res/1970, 26 February, 2011:



ցության խնդրանքները, որքան բարոյաբաղաբական պատասխանատվություն: Իրավա-կարգավորման նման եղանակը օգտագործվեց նաև Լիբիայի գործով ԱԽ բանաձևի ընդունման ժամանակ, որտեղ Լիբիայի վրա իմպերատիվ պարտավորություն դրվեց համագործակցելու դատարանի հետ, իսկ մյուս պետությունների դեպքում նորից օգտագործվեց «հետևողականորեն կոչ անել» արտահայտությունը<sup>20</sup>: Կարծում ենք՝ գործնական առումով ավելի օգտակար կլիներ, եթե պետությունների միջազգային ընտանիքը կարողանար այնպիսի ողջամիտ և միջազգային իրավունքի տեսակետից իրավաչափ լուծում գտնել, որը հնարավորություն կտար թելուզ *“soft law”*-ի միջոցով, «մյուս պետություններ» կատեգորիայի մեջ մտնող երկրներին նույնպես մղել՝ նման դեպքերում համագործակցելու Միջազգային քրեական դատարանի հետ:

Սուդանին առնչվող իրավիճակի վերաբերյալ քննության ընթացքում Միջազգային քրեական դատարանի մինչդատական վարույթի պալատը դատախազի դիմումի հիման վրա 2009 թ. մարտի 4-ին արձակեց Սուդանի նախագահ Օմար ալ-Բաշիրին կալանավորելու սանկցիա<sup>21</sup>, որը քարտուղարության միջոցով ուղարկվեց դատարանի բոլոր մասնակից պետություններին<sup>22</sup>: Սուդանը բնականաբար չկատարեց դատարանի նշված որոշումը, իսկ Օմար ալ-Բաշիրը նշված սանկցիայի արձակումից հետո անարգել այցելեց արտասահմանյան մի շարք երկրներ:

Այժմ քննության առնենք պետությունների ինքնիշխանությունը հարգելու տեսանկյունից այնպիսի հարց, ինչպիսին է Հռոմի միջազգային քրեական դատարանի կողմից պետության գործող գլխի նկատմամբ կալանավորման սանկցիա արձակելու համապատասխանությունը միջազգային իրավունքի նորմերին, ինչպես նաև պետությունների պարտավորությունները նշված որոշումը կատարելու գործում:

Որոշ հետազոտողներ, հղում կատարելով Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961 թ. կոնվենցիայի 31-րդ հոդվածին, որը սահմանում է դիվանագիտական գործակալի անձեռնմխելիությունը հավատարմագրման երկրի քրեական իրավագործությունից, ինչպես նաև Հատուկ առաքելությունների մասին 1969թ. կոնվենցիային, պնդում են, որ պետությունների գլուխները երրորդ պետություններում օժտված են բացարձակ իմունիտետով<sup>23</sup>: Կարծում ենք՝ այս հարցում անհրաժեշտ է որոշակի պարզություն մտցնել: Նշված կոնվենցիաներում խոսքը երրորդ պետության իրավագործությունից անձեռնմխելիության մասին է, և ոչ թե միջազգային դատարանների իրավագործությունից: Պետության գլխի կարգավիճակը անձին չի ազատում միջազգային իրավունքով հանցագործություն համարվող արարքների համար պատասխանատվությունից, ինչը հաստատվեց դեռևս Նյուրնբերգյան դատավարության ժամանակ ձևավորված սկզբունքներով<sup>24</sup>: Պաշտոնական դիրքի վկայակոչման անթույլատրելիությունը ըստ միջազգային իրավունքի հանցագործությունների դեպքում անրագրված է նաև Տոկիոյի,

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում, կետ 5:

<sup>21</sup> Տե՛ս No.: ICC-02/05-01/09, The Prosecutor v. Omar Hassan Ahmad Al Bashir, Warrant of Arrest for Omar Hassan Ahmad Al Bashir, ICC-02/05-01/09-1, 4 March, 2009:

<sup>22</sup> Տե՛ս A/65/313, Sixth Report of the International Criminal Court to the United Nations for 2009/2010, 28/10/2010:

<sup>23</sup> Տե՛ս Мезяев А. Б., Международно-правовые аспекты решения Международного уголовного суда о выдаче ордера на арест президента Судана, Российский юридический журнал, 2009, No 6 (69), էջ 85:

<sup>24</sup> Տե՛ս Principles of International Law Recognized in the Charter of the Nuremberg Tribunal and in the Judgment of the Tribunal, Yearbook of the International Law Commission, 1950, vol. 2, para. 97:

Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալների կանոնադրություններում, ինչպես նաև Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի 27-րդ հոդվածով: Սակայն, եթե միջազգային հանցագործություններ կատարելու դեպքում պետության գլուխների պատասխանատվությունը սահմանող նորմերի առկայությունը ժամանակակից միջազգային իրավունքում կասկած չի հարուցում, ապա նման պատասխանատվության իրականացման եղանակների հարցը վիճելի է:

Փորձենք ներկայացնել այս հարցի վերաբերյալ ձևավորված դատական նախադեպերը և դրանց առանձնահատկությունները: Առաջինը Չիլիի նախկին նախագահ Ավգուստո Պինոչետի գործով Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի վճիռն է, ըստ որի՝ նման պատասխանատվությունը պետք է իրականացվի միայն պետական գործառույթների ավարտից հետո<sup>25</sup>: Իսկ ՄԱԿ-ի Միջազգային դատարանը, քննարկելով Կոնգոյի կողմից Բելգիայի դեմ ուղղված հայցը, որը վերաբերում էր Կոնգոյի արտաքին գործերի նախարարի նկատմամբ Բելգիայի արձակած կալանավորման սանկցիայի իրավաչափությանը, նշված հարցի վերաբերյալ արտահայտեց հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ըստ միջազգային իրավունքի՝ հանցագործությունների մեջ մեղադրվող անձինք չպետք է ներպետական մակարդակում օգտվեն միջազգային իրավունքով իրենց վերապահված անձեռնմխելիությունից և կարող են պատասխանատվություն կրել ներպետական օրենսդրական դրույթների հիման վրա,

- նման անձինք չեն կարող օգտվել անձեռնմխելիությունից օտարերկրյա պետության իրավագործությունից, եթե այն պետությունը, որը նրանք ներկայացնում են, հրաժարվում է նման անձեռնմխելիությունից,

- նման անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել երրորդ պետությունների դատարանների կողմից միայն իրենց պաշտոնական գործառույթների ավարտից հետո՝ ըստ միջազգային իրավունքի հանցանքներ գործած լինելու դեպքում,

- նման անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել համապատասխան միջազգային քրեական այն դատարանների կողմից, որոնք իրավագործություն ունեն տվյալ գործի նկատմամբ<sup>26</sup>:

Այսպիսով, նշված դատական որոշման մեջ ճանաչելով պետությունների գործող գլուխների պատասխանատվության հնարավորությունը ըստ միջազգային իրավունքի և միջազգային դատարանների կողմից՝ ՄԱԿ-ի Միջազգային դատարանը հնարավոր չհամարեց երրորդ պետության դատական մարմնի կողմից նման իրավագործության իրականացումը: Սակայն այս հարցի վերաբերյալ Հռոմի միջազգային քրեական դատարանի մինչդատական վարույթի պալատը որոշակիորեն այլ իրավական դիրքորոշումներ է արտահայտել՝ քննարկելով Չադի և Մալավիի կողմից Հռոմի ստատուտով ստանձնած իրենց պարտավորությունները չկատարելու փաստը: Վերջիններս՝ որպես ստատուտի մասնակից պետություններ, ունենալով դատարանի հետ համագործակցելու ուղղակի պարտավորություններ, հրաժարվեցին ձերբակալել և դատարանին հանձնել Օմար ալ-

<sup>25</sup> St'u Wladislaw Czaplinski, *Jus cogens, obligations erga omnes and international criminal responsibility in The Legal Regime of the International Criminal Court: Essays in Honour of Professor Igor Blishchenko*, ed. by Jose Doria, Hans Peter Gasser, M. Cherif Bassiouni, Martinus Nijhoff Publishers, Boston, 2009, էջ 411:

<sup>26</sup> St'u Arrest warrant of 11 April 2000, (*Democratic Republic of the Congo v. Belgium*), Judgment of 12 February 2002, ICJ Reports 2002, para. 61:

Բաշիրին, երբ վերջինս գտնվում էր նշված պետություններում,<sup>27</sup> պատճառաբանելով պետության գլուխների անձեռնմխելիությունների վերաբերյալ սովորուբային միջազգային իրավունքի նորմերը, ինչպես նաև Ղոնի ստատուտի 98-րդ հոդվածի 1-ին կետը, որով սահմանվում է, որ դատարանը չի կարող դիմել փոխանցման կամ այնպիսի աջակցության վերաբերյալ խնդրանքով, որը հարցվող պետությունից կպահանջեր կատարել անձի կամ երրորդ պետության գույքի պետական կամ դիվանագիտական անձեռնմխելիության առնչությամբ միջազգային իրավունքով իր ստանձնած պարտավորություններին հակասող գործողություններ այնքան ժամանակ, մինչև դատարանն անձեռնմխելիությունից հրաժարվելու հարցում կանխապես չստանա այդ երրորդ պետության համագործակցության համաձայնությունը: Մինչդատական վարույթի պալատը նշված գործով հանգեց այն եզրակացությանը, որ պետությունների գլուխների պատասխանատվությունը ըստ միջազգային իրավունքի հանցանքներ գործելու դեպքում իրենից չի ենթադրում նրանց անձեռնմխելիությունը ազգային մակարդակով այդ անձանց նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառումից, եթե վերջիններս ուղղված են ապահովելու նրանց պատասխանատվությունը միջազգային մակարդակով քրեական արդարադատություն իրականացնող մարմինների կողմից<sup>28</sup>: Այսինքն այստեղ առաջ է գալիս պատասխանատվության իրականացման եղանակը. արդյոք հարկադրանքի միջոցի կիրառումը կոչված է ապահովելու անձի պատասխանատվությունը միջազգային դատական ատյանում, թե՞ ներպետական: Նման տարբերակման անհրաժեշտությունը բխում է այն փաստից, որ պետության գլուխների անձեռնմխելիությունը երրորդ պետության ներպետական մարմինների որոշումների հիման վրա նրանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցներից պայմանավորված է նրանով, որ այդպիսի անձեռնմխելիությունը անհրաժեշտ է վերջիններիս իրենց գործառույթների անխափան իրականացման և երրորդ պետության անհարկի խոչընդոտներից և չարաշահումներից խուսափելու համար, ինչը բացառվում է միջազգային մարմինների կողմից:<sup>29</sup> Կարծում ենք՝ Ղոնի Միջազգային քրեական դատարանի մինչդատական վարույթի պալատի նշված դիրքորոշումը առավելագույնս համապատասխանում է Ղոնի ստատուտի տառին և ոգուն, քանի որ եթե պետությունների գլուխները կարող են պատասխանատվության ենթարկվել ըստ միջազգային իրավունքի և միջազգային դատական ատյանների կողմից, ապա նրանք չեն կարող վկայակոչել իրենց անձեռնմխելիությունը տվյալ դատական մարմինների հարկադրական միջոցները ազգային իշխանությունների կողմից իրականացնելիս, քանի որ նշված հարկադրական միջոցները վերջին հաշվով ուղղված են նշված դատական մարմիններում այդ անձանց պատասխանատվության ապահովմանը: Միևնույն ժամանակ ընդգծենք, որ նշված իրավական դիրքորոշումը դեռևս չի հավակնում միջազգային-իրավական նորմ դառնալու: Որոշակի նախադեպերի առկայությունը և պետությունների շարունակական պրակտիկան միայն կարող են վկայել նման նորմի ձևավորման մասին:

Հարկ է նշել, որ գոյություն ունեցող որոշակի հակասությունը Ղոնի ստատուտի 27-րդ հոդվածի 2-րդ կետի և 98-րդ հոդվածի 1-ին կետի միջև, մեր կարծիքով, պետք է մեկ-

<sup>27</sup> Տե՛ս A/67/308, Eighth Report of the International Criminal Court to the United Nations, 14 August 2012:

<sup>28</sup> Տե՛ս No.: ICC-02/05-01/09, The Prosecutor v. Omar Hassan Ahmad Al Bashir, Pre-Trial Chamber 1, Decision Pursuant to the Article 87 (7) of the Rome Statute on the Failure by the Republic of Malawi to Comply with the Cooperation Requests Issued by the Court with Respect to the Arrest and Surrender of Omar Hassan Ahmad Al Bashir, 12 December 2011, para. 35, 41:

<sup>29</sup> Տե՛ս Antonio Cassese, International Criminal Law, Oxford University Press, 2<sup>nd</sup> ed., 2008, էջ 312:

նաբանվի հոգուտ 27-րդ հոդվածի 2-րդ կետի: Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969 թ. մայիս 23-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի առարկայի և նպատակի լույսի ներքո: Իսկ Չռոմի ստատուտի նպատակները թվարկված են նախաբանում, որտեղ, ի թիվս այլոց, նշվում է ստատուտի մասնակից պետությունների վճռակա-նությունը՝ «...վերջ դնելու նման հանցագործություններ կատարածների անպատժելիութ-յանը և դրանով իսկ նպաստելու այդպիսի հանցագործությունների կանխմանը...»: Աս-վածի համատեքստում, նման նպատակ ունեցող պետությունները չեն կարող վկայակո-չել անձեռնմխելիությունների վերաբերյալ միջազգային-իրավական նորմերը, եթե դրանք ուղղված են չեզոքացնելու որոշակի անձանց պատասխանատվությունը Միջազ-գային քրեական դատարանի առջև:

Միջազգային քրեական դատարանի հետ պետությունների համագործակցելուց հրա-ժարվելու դեպքերում գործող մեխանիզմները սահմանվում են Չռոմի ստատուտի 87-րդ հոդվածի 7-րդ կետով: Եթե ստատուտին միացած պետությունը, հակառակ ստատուտի դրույթների, չի կատարում համագործակցության մասին դատարանի խնդրանքը՝ դրա-նով իսկ խոչընդոտելով դատարանի՝ ստատուտով նախատեսված գործառույթների և լիազորությունների կատարմանը, դատարանը կարող է այդ հարցի կապակցությամբ ո-րոշում կայացնել և այն քննության հանձնել մասնակից պետությունների ասամբլեային, իսկ եթե գործը քննության է հանձնվել Անվտանգության խորհրդի կողմից, Անվտանգութ-յան խորհրդին: Պատասխանատվության նույնպիսի մեխանիզմ է նախատեսված նաև դատարանի հետ *ad hoc* համաձայնագիր կնքած պետությունների՝ տվյալ համաձայնագ-րով իրենց ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարե-լու դեպքերում:

Այսպիսով, ուսումնասիրելով միջազգային քրեական դատարանների որոշումների իմպլեմենտացման գործում պետությունների ունեցած միջազգային-իրավական պար-տավորությունները՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից՝ կանոնադրության 7-րդ գլխի 41-րդ հոդվածի հիման վրա Նախկին Հարավսլավիայի և Ռուանդայի տրիբունալների հիմնադ-րումը վերջիններիս օժտում է այն առավելությամբ, որ ՄԱԿ անդամ բոլոր պետություննե-րը իրավաբանորեն պարտավորվում են կատարել վերջիններիս համագործակցության խնդրանքները, ինչը բխում է ԱԽ համապատասխան բանաձևերից և ՄԱԿ-ի կանոնադ-րության 25-րդ հոդվածից:

- Տրիբունալների ստատուտների և դատական պրակտիկայի, ինչպես նաև ընդհա-նուր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների ուսումնասիրությունը վկայում է, որ տրիբունալների համագործակցության խնդրանքները և հրամանները չպետք է ուղ-ղակիորեն հասցեագրվեն պետությունների պաշտոնատար անձանց, այլ՝ այն պետութ-յուններին, որոնք իրավասու են ներպետական մակարդակում որոշելու այն անձանց շրջանակը, ովքեր պատասխանատու են նշված խնդրանքների իրականացման համար:

- Տրիբունալների դատական պրակտիկայի և տարբեր երկրների ներպետական օ-րենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ դեպքերում տրիբունալի որո-շումները կարող են անմիջական գործողություն ունենալ պետությունների տարածքում և տվյալ պետությունում գտնվող անձանց համար անմիջականորեն առաջացնել պարտա-կանություններ: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ նման պարտավորութ-յունների խախտման համար տվյալ անձինք կարող են պատասխանատվություն կրել նաև ներպետական օրենսդրությամբ:

• Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի մասնակից պետությունները պարտավոր են անշեղորեն կատարել ստատուտի պահանջները միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարման սկզբունքին համապատասխան: Ստատուտին ոչ մասնակից պետությունների համար կարող են առաջանալ դատարանի հետ համագործակցելու միջազգային-իրավական պարտավորություններ՝ դատարանի հետ *ad hoc* համաձայնագիր ստորագրելու, ինչպես նաև ԱԽ կողմից դատարանին իրավիճակը ներկայացնելու դեպքում, եթե համապատասխան բանաձևով իմպերատիվ կերպով նախատեսվի պետությունների համագործակցելու պարտավորությունը՝ անկախ ստատուտի մասնակից լինելու հանգամանքից, կամ պետությունների միջազգային ընտանիքի կողմից միջազգային իրավունքի տեսակետից այնպիսի իրավաչափ լուծում գտնելու դեպքում, որը հնարավորություն կտա թեկուզ *“soft law”*-ի միջոցով Միջազգային քրեական դատարանի անդամ չհանդիսացող պետություններին մղել Միջազգային քրեական դատարանի հետ համագործակցության:

• Միջազգային քրեական արդարադատության արդյունավետության և հանցանքների գործած անձանց պատժի անխուսափելիության նպատակների իրականացման համար անհրաժեշտ է միջպետական հարաբերություններում ամրագրել այն սկզբունքը, որի համաձայն՝ անձեռնմխելիությունների մասին միջազգային-իրավական նորմերը չպետք է խանգարեն պետություններին՝ ներպետական մակարդակում իրականացնելու նման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ միջազգային քրեական դատարանի որոշման հիման վրա կիրառվող հարկադրական միջոցները, եթե այդ միջոցները ուղղված են միջազգային դատական մարմնի առջև տվյալ անձի պատասխանատվությունը ապահովելուն:

## DECISIONS OF INTERNATIONAL CRIMINAL COURTS AND INTERNATIONAL LEGAL GUARANTEES FOR THEIR IMPLEMENTATION

**Mher Mkrtchyan**

*PhD Student of the Chair of  
European and International Law, YSU*

International legal obligations of states regarding the international criminal tribunals of Former Yugoslavia and Rwanda as well as the International criminal court are discussed in the article. International legal norms which consider to be the base of similar obligations as well as their position in the hierarchy of international legal norms are discussed in current article.

Investigations on legal practice of tribunals and the study of internal legislation of some states show that some decisions of tribunals can be directly addressed to their citizens.

The international-legal norms concerning immunities should not hinder the states to carry out compulsory means in internal level sentenced by ICC decision against some individuals who enjoy immunity if those means are addressed to ensure the responsibility of the certain individual before the ICC.

## МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ИСПОЛНЕНИЯ РЕШЕНИЙ МЕЖДУНАРОДНЫХ УГОЛОВНЫХ СУДОВ

**Мгер Мкртчян**

*аспирант кафедры европейского и  
международного права ЕГУ*

---

В статье обсуждаются международно-правовые обязательства государств в вопросе имплементации на внутригосударственном уровне решений международных уголовных трибуналов по бывшей Югославии и Руанды, а также Международного уголовного суда. Обсуждаются также международно-правовые нормы, являющиеся основой таких обязательств, и их место в иерархии международно-правовых норм.

Исследование судебной практики трибуналов и внутригосударственного законодательства некоторых государств свидетельствует о том, что отдельные решения трибуналов могут быть адресованы непосредственно гражданам этих государств.

Международно-правовые нормы о неприкосновенности не должны мешать государствам на внутригосударственном уровне осуществлять принудительные меры против лиц, пользующихся такой неприкосновенностью, применимой на основе решения МУС, если эти средства направлены на обеспечение ответственности данного лица перед МУС.

**Բանալի բառեր** – անձեռնմխելիություն, իրավագործություն, համագործակցություն, հետաքննություն, ներստատական, պատասխանատվություն, պարտավորություն

**Key words:** immunity, jurisdiction, compliance, investigation, internal, responsibility

**Ключевые слова:** неприкосновенность, юрисдикция, сотрудничество, расследование, внутригосударственный, ответственность, обязательство